

# ՎԱՆ - ՔԱՂԱՔԱՄԻՋԻ ԱՊՐԻԼԵԱՆ ԿՈՒԻՆԵՐԸ

Գրեց՝ ՀԱՅԿ ԿՈՍՏՅԵԱՆ

ՎՐԷՃԻՆԴՐՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐ (ՄԱՅԻՍ 3)

**Թ**ՈՒՐԲԵՐՈՒ փախը աննկարագրելի է... Գաղթողներու կարաւանը բռնած է այս անգամ եւ այն ճամբան, որ «Փաշի աղբիւր»էն կը բաժնուի դէպի Այդեաստան: Շամիրամայ բոլոր թաղերու թրքութիւնն է որ կը շարժուի այդ դժով դէպի Հայոց-Չոր:

Մայիս 3-ին կոիւր քաղաքի շուրջ խիստ մեղմացած է, թուրք զիրքերէն թոյլ հրացանաձգութիւն կայ, խսկ թնդանօթները շատ դանդաղ կը գործեն: Միայն Շամիրամի այգիներու մէջէն շրապնէլը մինչեւ կէսօր՝ ցըրուած ուղղութեամբ երկու տասնեակի չափ զնդակներ արձակեց եւ լռեց:

Երեկոյեան ժամը 10-ին (եւր. 3) տիրեց ընդհ. լռութիւն եւ հանդստութիւն: Նոյն պահուն խուլ թնդանօթի դողոցներ լսելի եղան Այդեաստանէն: Մեր դիտարանէն նայելով՝ դիտակը շատ յստակ ցուցուց, որ երկու թնդանօթներ Հաջի Պէքիրի զօրանոցի քովէն անդադար կը ուժակոծէին Պողպտի դարի ուղղութեամբ, որ տեւեց մինչեւ 11 (ե. 4):

Ընդհանուր դրութեան մասին Շտապին մէջ խորհրդակցութիւն սկսաւ: Կը մտածէինք քանի մը կէտերէ դուրս գալով յարձակում գործել: Սակայն, կացութեան մասին ստոյգ ոչ մէկ բան չգիտնալով, խոհեմութիւն համարեցինք դեռ սպասել, մի գուցէ վերջին դաւ մը լարէ թշնամին մեզ մեր զիրքերէն դուրս հանելով՝ յանկարծակիի բերէ: Այդեաստանցիներու կողմէ քանի որ այդպիսի ձեռնարկ մը չերեւիր, լաւ է դեռ սպասել քանի մը ժամ եւս:

Ժամը ուղիղ 12½-ին (ե. 4½-ին) տեսանք արդէն, որ Յայնկոյաներու զօրանոցը բռնկած է, որուն յաջորդեց եւ թօփրաք Գալէի պահականոցի այրումը: Որոշ չգիտցանք՝ նահանջող թրքութիւնն է որ վառեց, թէ՞ Այդեաստանցիները: Եթէ Հաջի Պէքիրի մեծ զօրանոցն ալ կրակ առաւ, որոշ է թէ Այ-

դեաստանի մեր կռուողները յարձակողականի անցած են. ուստի, որոշեցինք սպասել այդ ազդանշանին: Եւ հրահանգուեցաւ մեր զիրքերուն դուրս ելնել եւ պատրաստ վիճակի մէջ կենալ, հետախուզութիւն կատարելով թէ թուրք զիրքերուն մէջ մարդ կա՞յ:

Գիշերը սկսեց: Համատարած խաղաղութիւն: Չկայ ամենօրեայ գիշերային աղմուկը, որ յատուկ էր անցող այդ պահերուն: Բոլորս ազատ, դիտարանի տանիքը բարձրացած՝ կը դիտէինք Այդեաստանը, ուր հեռահեռէ հրդեհումներու լոյսերը շատցան, հեռաւոր խաւարին մէջ՝ մերթ երեւնալով՝ մերթ կորսուելով: Հրային կարմիր դիժ մը հիւսիս-արեւելքէն՝ հարաւ արեւմուտք կը ճեղքէր Այդեաստանի սեւ տարածութիւնը: Մի քանի վայրկեան եւս, ահա արեւելքէն ծագեց ահաւոր հրդեհումի շողարձակումը, բերդը կարմրեց, տըժ-դոյն աղօտ լուսաւորութեամբ:

— Հաջի-Պէքիրի զօրանոց-ամբոյն է, որ կը բորբոքի, — ցնծալին դոշեցին ամէնքը. — Ազդանշանը ա՛լ պարզ էր. Այդեաստանցի մարտիկները յարձակողականի անցած են: Ոչ մէկ տարակոյս:

Ամառիջապէս Շտապէն հրահանգուեցաւ շրջանապետներուն եւ խմբապետներուն. — «Իրիքերու մէջ հսկողութիւնը պահելով, գլխ. խմբապետները շրջանապետի ղեկավարութեամբ դուրս ելնեն եւ հրդեհէն բոլոր թուրքական զիրքերը, առանց ներս մտնելու եւ հրտէքն բանալու, եթէ պատասխան չկայ»:

Սրտատրոփ պահ մը, եւ ահա մեր կռուողները ամենայն կարգապահութեամբ մեկնելով իրենց զիրքերէն՝ միաժամանակ վառեցին Կազոյեանի թուրքական զիրքը, Մէհմէտ էֆ.ի տունները, Աֆիֆի շէնքը, Աջմու զիրքը եւ գծի վրայ դառնուած ամբողջ թշնամու զիրքերը: Կրակէ գօտին բռնեց Քաղաքամիջի շուրջը կարմիր երիզով: Դեռ լոյսը չբացուած վրէժի արշալոյսն էր, որ կը պատուէր թանձր խա-